

ԱՆԴՈՅԱՆՔ

Մեր աչքերուն դէմ հրաքորը
Այս նոր փառաքան աւելի կը մեծնար
Եւ կը խեղդէր բերկրաքանին իր հեւքին մէջ խելայեղ:
Ա՛լ ոչ մէկ ձեռք կը կարկամէր,
Քունը չէր կրնար հասնիլ մեր կռուներուն.
Շանթահարիչ անհունութիւն մ'իրարու
Կը մօտեցնէր սիրտերը մեր կարօտով,
Ինչպէս եթէ վերածնած ըլլայինք...

Այն ատեն է որ մենք տեսանք աշխարհին
Վերասլացումը դէպի
Պատու մը խոր եւ սաստիկ...

Թեթեւաբայլ կ'ընթանայինք նամբուն վրայ
Հովին ծաւի դրօշին մէջ բռնելով:
Հորիզոնները քախեցան իրարու,
Եւ շեղակի լուսամուտները բացուեցան
Թշուառութեան մեր փողոցին վրայ յանկարծ,
Ինչպէս եթէ գերեզմաննոց մ'ըլլային
Գորշ տանիքները տուններուն,
Երբ հեկեկուն ձեռքերը մեր
Սեղմուած էին աղերսակոծ,
Եւ արդէն
Տեսլայարոյց քախիծով
Քաղաքն այլեւս դադրած էր մեծնալէ...

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

